ԷԼԻԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ELIZ GEVORGYAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի անկախացումը բարենպաստ պայմաններ են ստեղծում նոր արտաքին հարաբերությունների ձևավորման համար: ՀՀ-ն սկսում է վարել ինքնուրույն արտաքին քաղաքականություն, որի շնորհիվ դիվանագիտական հարաբերություններ են հաստատվում աշխարհի մի շարք երկրների, այդ թվում՝ Ուկրաինայի հետ: Կարելի է ասել, որ հայ-ուկրաինական պաշտոնական հարաբերությունների հաստատման առաջին շրջանը բավական ակտիվ և արդյունավետ էր, և այդ ընթացքում դրվում են հետագայում ավելի գործնական ուղիով ընթանալու հիմքերը: Անկախության առաջին տարիներին երկու պետությունների կառավարությունների և զանազան գերատեսչությունների միջև ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր: Այս փաստաթղթերը կյանքի կոչվեցին կանոնակարգելու նշված ոլորտների համագործակցությունը երկուստեք համաձայնության և փոխըմբռնման սկզբունքների հիման վրա: Դրանք հաստատում էին այն փաստը, որ երկուստեք լուրջ մտադրություն գոյություն ունի հետևողականորեն զարգացնելու և ընդլայնելու փոխադարձ շփումների շրջանակները թե առանձին մարդկանց, թե պետական կառույցների ու հաստատությունների միջև:

20-րդ դարի 90-ական թթ. դարձան Հայաստանի երրորդ Հանրապետության միջազգային դիվանագիտական ճանաչման ժամանակաշրջան: Նորանկախ պետությունը աստիճանաբար մուտք գործեց աշխարհի առաջատար քաղաքակիրթ, ժողովրդավարական պետությունների ընտանիք, անդամակցելով հեղինակավոր միջազգային ու տարածաշրջանային կառույցներին՝ ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին, ՍԾՏՀ-ին և այլն:Հայաստանի արտաքին կապերի շրջանակում նոր բովանդակություն ստացավ համագործակցությունը վաղեմի բարեկամ պետության՝ Ուկրաինայի հետ:Երկկողմ համագործակցությունն ընդգրկում է բազմաթիվ ոլորտներ, որոնց հաստատուն հիմքերը ապահովում են ընդհանուր շահերի և ավանդական բարեկամության առկայությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ և Ուկրաինան բավականին հաջող համագործակցում են միջազգային կազմակերպություններում: ՀՀ ողջունել է ՆԱՏՕ-ի և Ուկրաինայի միջև ստորագրված հատուկ գործակցության խարտիան, պաշտպանել

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 52-րդ նստաշրջանում նախագահելու Գ. Ուդովենկոյի թեկնածությունը: 1995թ-ից Եվրախորհրդի անդամ Ուկրաինան էլ աջակցել է ՀՀ-ին Եվրոպական կառույցներում ինտեգրվելու գործում: ՀՀ-ն պատրաստակամություն է հայտնել աջակցել Ուկրաինայի թեկնածությանը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 54-րդ նստաշրջանում Անվտանգության Խորհրդի ոչ մշտական անդամ ընտրվելու հարցում և 1999թ. հոկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 54-րդ նստաշրջանում Ուկրաինան, որի օգտին քվեարկում է 158 երկիր, ընտրվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ՝ 2000-2001թթ. ժամանակաշրջանի համար:[1]

Միևնույն ժամանակ նշենք, որ դեռևս 1990-ական թվականների կեսերից հայ-ուկրաինական փոխհարաբերությունները պայմանավորվեցին նաև տարածաշրջանային մի շարք գործընթացներում երկու երկրների մասնակցության և ընդգրկվածության տարբերությամբ: Տարածաշրջանային համագործակցության տարբեր ծրագրերի շուրջ ընդհանուր շահեր ունեցող երկրների հայեցակարգերի ձևավորման արդյունքում սահմանափակվում էին Հայաստանի շահեկան մասնակցության հնարավորությունները: Տարածաշրջանային համագործակցության ծրագրերում լիարժեքորեն ներգրավվելու Հայաստանի վերոհիշյալ հիմնախնդիրն իր դրսևորումն է մինչ օրս գտնում նաև ՎՈՒՈՒԱՄ-ի (Վրաստան-Ուկրաինա-Ուզբեկստան-Ադրբեջան-Մոլդովա) զարգացման գործընթացներում, որին իր ակտիվ մասնակցությունն է բերում Ուկրաինան:

Նշենք, որ ՎՈՒՈՒԱՄ-ի կազմավորումը որոշակիորեն սահմանափակում է երկու երկրների պոտենցիալ համագործակցության հնարավորությունները միջազգային ասպարեզում: Մինչդեռ, մեր կարծիքով՝ երկկողմ հարաբերությունների բարձր մակարդակը կնպաստեր նաև Ուկրաինա-ՎՈՒՈՒԱՄ-ի երկրներ և ՀՀ-Ուկրաինա հարաբերությունների հավասարակշռության ապահովմանը:

Փաստորեն, միջազգային կազմակերպությունների շրջանակներում ՀՀ և Ուկրաինայի հարաբերությունների լիարժեք ծավալմանը որոշակիորեն խոչընդոտում է ՎՈՒՈՒԱՄ խմբավորման /ադրբեջանական գործոնը/ առկայությունը, որը մասնավորապես, արտահայտվում է միջազգային տարբեր կազմակերպություններում ՀՀ-ի համար կարևորություն ներկայացնող հարցերի նկատմամբ Ուկրաինայի կողմից երբեմն դրսևորվող ոչ հայանպաստ դիրքորոշումներով: Դրա ապացույցն են 1999թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում «Համագործակցություն ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի միջև» բանաձևի նախագծի քննարկման արդյունքները, երբ Ուկրաինան ՎՈՒՈՒԱՄ-ի մյուս երկրների հետ

[1] Տես ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, ց.5, գործ 281, էջ 93:

միասին հերթական անգամ քվեարկեց Ադրբեջանի պատվիրակության կողմից առաջարկված լրացման օգտին: Եվ դա այն դեպքում, երբ ՀՀ-ն միջազգային կազմակերպություններում գրեթե միշտ պաշտպանել է Ուկրաինայի համար կարևորություն ունեցող բանաձևերն ու նրա կողմից ներկայացված թեկնածությունները:[2]

Եվս մեկ փաստ ուկրաինա-ադրբեջանական ռազմատեխնիկական համագործակցության մասին: Համաձայն «ԺպվՖ» օրաթերթի, Ուկրաինայի Պաշտպանության նախարարության Նիկոլաևի ավիավերանորոգման ձեռնարկությունը 1 մլն. ԱՄՆ դոլար արժողությամբ պայմանագիր է կնքել Ադրբեջանի հետ վերջինիս ռազմա-օդային ուժերի ՍՈՒ-24 ինքնաթիռները վերանորոգելու համար:[3]

Իսկ դա եզակի փաստ չէ. թեև Ուկրաինայի ղեկավարները բազմիցս հայտարարել են, որ իրենք ձգտում են հավասարակշռված բարյացակամ հարաբերություններ պահպանել ու ցուցաբերել և՛ ՀՀ-ի և՛ Ադրբեջանի հետ: Սինչդեռ իրողությունները բոլորովին էլ չեն խոսում նման մոտեցման մասին: Այդ կապակցությամբ մեջբերում ենք ևս մեկ ցցուն փաստ, որը բոլորովին էլ հարիր չէր բարեկամ երկրի ցուցաբերած կեցվածքին: Այսպես, Տրանսպորտի նախարարների եվրոպական համաժողովի շրջանակներում Փարիզում կայացած հանդիպման ժամանակ Թուրքիան և Ադրբեջանը արգելափակում են այս կազմակերպությանը ՀՀ-ի անդամակցության հայտի ընթացքը: Ցավալիորեն, այդ ժամանակ էլ Ուկրաինան դեմ էր քվեարկել ՀՀ անդամակցությանը, մի դիրքորոշում, ինչը միանգամայն անհասկանալի էր զուտ տնտեսական, ոչ քաղաքական այս կառույցի պարագայում: Նմանատիպ իրավիճակներում ՀՀ-ն բազմիցս քվեարկել է Ուկրաինայի օգտին: Այս գործընթացից բխող զգուշավոր լավատեսությունը դրդում էր հայ դիվանագիտությանը, ի տարբերություն Ադրբեջանի, կշռադատել իր բոլոր հայտարարությունները և ուշադիր հետևել հիմնահարցի առիթով բոլոր դերակատարների, հատկապես՝ հարևան և բարեկամ երկրների մոտեցումներին:[4]

Ընդհանրապես երկկողմ հարաբերություններում ՀՀ-ն խիստ կարևորում է զուսպ, հավասարակշռված դիրքորոշման ցուցաբերում միջազգային կազմակերպություններում կողմերից որևէ մեկին վերաբերող հարցերում: Ուստի և ՀՀ համար կարևորագույն նշանակության հարցերում ուկրաինական կողմից էլ

---

[2] Տես ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, g.5, գործ 281, էջ 135-136:
[3] Տես ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, g.5, գործ 281, էջ 92:
[4] Տես ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, g.7, գործ 242, էջ 92-93:

ակնկալվում է ըմբռնումով մոտեցում: Իսկ ինչ գնահատական կարելի է տալ 2001թ. սեպտեմբերի 6-ին ԵԱՀԿ-ի Մշտական խորհրդի հանդիպման ընթացքում ՎՈՒՈՒՄ-ի երկրների անունից Ուկրաինայի տարածած հայտարարությանը, որով անօրինական էր հայտարարվել Լեռնային Ղարաբաղում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Ո՞րքանով է դա համազոր ուկրաինական կողմից միջազգային ատյաններում Հայաստանի ցուցաբերած աջակցությանը:

Մեր այս հարցադրումը ելնում է այն պարզ ու հայտնի պայմանավորվածությունից, որ ձեռք է բերվել Ուկրաինայի հետ միջազգային կազմակերպություններում համագործակցելու վերաբերյալ: Այն է՝ կողմերի համար կարևորություն ներկայացնող հարցերի շուրջ դիրքորոշում արտահայտելիս միմյանց հետ նախօրոք խորհրդակցել, իսկ այն հարցերում, որտեղ դիրքորոշումները տարբերվում են, ապա՝ ձեռնպահ մնալ:

ՀՀ-ն Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Ուկրաինայի կողմից ակնկալում էր զուսպ և հավասարակշռված մոտեցում, քանզի Ադրբեջանի կողմից փորձեր էին նկատվում օգտագործել ՎՈՒՈՒՄ-ը և առանձին այլ կառույցներ՝ հակահայկական քարոզչություն և հավասարակշռությունը խախտող լուծումներ առաջարկելով:[5]

Ինչ վերաբերում է տարածաշրջանային համագործակցությանը, ապա, այդ կարգի ծրագրերում լիարժեքորեն ներգրավվելու ՀՀ վերոհիշյալ հիմնախնդիրն իր դրսևորումն է մինչև օրս գտնում, ինչպես արդեն նշել էինք, ՎՈՒՈՒՄ-ի զարգացման գործընթացներում (վերոնշյալ կազմակերպության ստեղծման վերաբերյալ արձանագրությունը ստորագրվել է 1997թ. նոյեմբերի 25-ին՝ Բաքվում, իսկ 1999թ. կազմակերպությանը միացավ Ուզբեկստանը),[6] որին, ինչպես վերն արդեն նշել էինք, իր ակտիվ մասնակցությունն էր բերում նաև Ուկրաինան:

Համաձայն 2001թ. հունիսի 6-ին Յալթայում ստորագրված ՎՈՒՈՒՄ-ի Խարտիայի (Կանոնադրության), որի ընդունմամբ, փաստորեն, հստակեցվեց այդ կազմակերպության իրավական կարգավիճակը, կազմակերպության խնդիրներն էին՝ գործունեության բոլոր ոլորտներում տարածաշրջանային անվտանգության ամրապնդում, անդամ պետությունների առևտրատնտեսական կապերի ամրապնդում և ընդլայնում, մասնակից երկրների տարածքնե-

---

[5] Տես ՀՀ ԱԳՆ Պատմաքաղաքական բաժին, գ.7, գործ 242, էջ 183-184:

[6] Տես Шакарянц С., Политика постсоветской России на Кавказе и ее перспективы. Е., АЦСНИ, 2001, стр 185, Мурадян И., Егиазарян А., Украина в политике западного сообщества, Турции и России, Ереван, "Антарес", 2008, стр. 245:

ռում տրանսպորտային և հաղորդակցության ուղիների զարգացում և արդյունավետ օգտագործում՝ համաձայն նրանց շահերի, միջազգային կազմակերպությունների շրջանակներում փոխգործակցության և այլն:[7]

Թեև այդ կազմակերպության գագաթաժողովների և հանդիպումների ընթացքում, ըստ էության, չեն քննարկվում նրա շրջանակներում ռազմական համագործակցություն ծավալելու հարցերը, սակայն վերոհիշյալ Խարտիայում ամրագրվել է այն դրույթը, համաձայն որի՝ մասնակից երկրները կարող են հանդես գալ համագործակցության ոլորտներն ընդլայնելու առաջարկությամբ: Ի դեպ, վերջին շրջանում ՎՈՒՈՒԱՄ-ը արդեն մշակում է նաև ռազմական բնույթի ծրագրեր և սկիզբ դնում նավթամուղների պահպանության խաղաղարար ուժերի ձևավորման գործընթացին՝ անդամ պետությունների պաշտպանության նախարարների միջև կայացած մի շարք հանդիպումների արդյունքում:[8] Չնայած այս ամենին, հարկ է փաստել նաև, որ ուկրաինական կողմը ՎՈՒՈՒԱՄ-ը դիտում է որպես տնտեսական համագործակցության կառույց՝ բացառելով ռազմական համագործակցությունը այդ կառույցում[9]: Այնուամենայնիվ, ի նկատի առնելով ՎՈՒՈՒԱՄ-ի նկատմամբ ՆԱՏՕ-ի առանձնահատուկ ուշադրությունը կարելի է ենթադրել, որ ռազմական համագործակցությունը կարող է լիարժեք զարգացում ունենալ: Այս ամենն անկասկած չի կարող չհարուցել ՀՀ դեկավարության որոշակի մտահոգությունը[10]:

Բացի այդ, մեր կարծիքով, ՎՈՒՈՒԱՄ-ը հեռանկարում չի դառնա լիարժեք միջազգային կազմակերպություն, քանի որ .

- նպատակները, որոնք հետապնդում կամ ձգտում է հետապնդել յուրաքանչյուր անդամ երկիր, բացարձակապես տարբեր են;
- անդամ պետությունները բավականին տարատեսակ են[11];
- այդ երկրների դիրքորոշումներում վերջին տարիներին ցուցադրվում են լուրջ փոփոխություններ Մոսկվայի և ԱՊՀ կառույցների հանդեպ;

---

[7] Տե՛ս Дегоев В., Игра на обоюдное поражение, "Независимая газета", 2001, 23 мая, № 90:

[8] Տե՛ս Бадрак В., Военно-техническое сотрудничество ГУУАМ: миф или реальность, "Зеркало недели", 2001, 8 сентября.№ 35.

[9] Տե՛ս Հայ-ուկրաինական հարաբերությունները հետխորհրդային շրջանում, ՀՀ ԱԳՆ, թերթիկ արխիվ, Ե., 2001, էջ1:

[10] Տե՛ս Мурадян И., Геоэкономические проблемы Кавказско-Каспийского региона, Е., " Антарес", 1999, стр 112-113:

[11] Парахонский Б., ГУУАМ: путь к стратегической стабильности на Кавказе, տե՛ս "Центральная Азия и Кавказ", № 16 /12/, 2000, стр. 39:

• կազմակերպության ներսում ոչ այդքան մեծ տեղ է հատկացվում տնտեսական համագործակցությանը,[12] և այլն:

2006 թվականի մայիսի 22-23-ին Ուկրաինան և Ադրբեջանը հայտարարեցին ՎՈՒԱՄ անդամների հարաբերությունները զարգացնելու իրենց մտադրությունը՝ վերանվանելով կազմակերպությունը ՎՈՒԱՄ Ժողովրդավարության և տնտեսության զարգացման կազմակերպություն: Կազմակերպության գլխավոր գրասենյակը հիմնադրվեց Ուկրաինայի մայրաքաղաքում: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը դարձավ կազմակերպության առաջին գլխավոր քարտուղարը: Կազմակերպության մյուս անդամները որակեցին այս որոշումը որպես քայլ դեպի զարգացում:

Չնայած Կիևի բազմաթիվ հավաստիացումներին, հայկական կողմի մտահոգության առարկա են շարունակում մնալ (որի մասին բազմիցս և տարբեր մակարդակներով հայտնվել է ուկրաինական կողմին), ինչպես ուկրաինա-ադրբեջանական ռազմավարական կապերի բնույթ ստացող հարաբերությունների խորացումը, այնպես էլ միջազգային ատյաններում հակահայկական բանաձևերին և ծրագրերին փաստացի աջակցությունը Ուկրաինայի կողմից:

Ուշադրության արժանի ենք համարում Ուկրաինայում ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ռ.Ազիզբեկյանի հանդիպումը Ուկրաինայի ԱԳՆ Եվրաատլանտյան համագործակցության վարչության պետի տեղակալ, ԵԱՀԿ բաժնի վարիչ Իգոր Լոսովսկու հետ (2001թ. սեպտեմբերի 25-ին): Այս հանդիպման ժամանակ է անդրադարձ կատարվել վերը հիշատակված այն հայտնի հայտարարությանը, որը 2001թ. սեպտեմբերի 6-ին ԵԱՀԿ Մշտական խորհրդում ՎՈՒԱՄ երկրների անունից տարածել էր ուկրաինական կողմը և, որի կապակցությամբ իր դժգոհություն էր հայտնել. ՀՀ-ն, շեշտելով, որ ուկրաինական կողմը խախտել է միջազգային կազմակերպություններում համագործակցելու իրենց պայմանավորվածությունը: Նման քայլով Ուկրաինան փաստորեն խախտել է պայմանավորվածությունը, ինչը իրավունք է ընձեռում հայկական կողմին ձեռնպահ մնալ պայմանավորվածություններից, վերապահումով մոտենալ միջազգային կազմակերպություններում հնարավոր համագործակցության շրջանակներին: Դա արժանի դիվանագիտական քայլ է ի պատասխան հակառակ կողմի դիրքորոշման:[13] Ակնհայտորեն Եվրոպայի խորհրդի շրջանակներում ձեւավորված ՎՈՒԱՄ-ի ստեղծումը նպատակ էր հետապնդում հակակշռել ԱՊՀ-ին: Առանց ԱՄՆ ֆինանսական աջակցության ՎՈՒԱՄ-ը

---

[12] Прейгер Л., Малярчук И., ГУУАМ: экономичесне основы кооперации, տե՛ս "Центральная Азия и Кавказ", № 16 /12/ , 2000, стр 162:

(Ուզբեկստանը դադարեցրեց իր անդամակցությունը 2005թ.) տնտեսապես գոյություն չունի, եւ հենց դրանով է պայմանավորված տնտեսական կառույցի անհրաժեշտությունը: Եւ քանի որ ՎՈւԱՄ-ի ներկայիս անդամները տնտեսապես այնքան էլ ինտեգրված չեն, ապա նրանց կապող տնտեսական հիմնական գործոնը կարող է դառնալ ադրբեջանական նավթը Վրաստանով Եվրոպա արտահանել: Եվ կարող ենք ասել, որ այս կազմակերպությունը սոսկ օժանդակ եւ անցումային կառույց է, առանց երկարաժամկետ հեռանկարների: ՎՈւԱՄ-ի անդամ բոլոր երկրներն իրենց առջեւ ավելի հուսալի եւ ամուր այնպիսի կառույցների ինտեգրվելու նպատակ ունեն, ինչպիսք են Եվրամիությունն ու ՆԱՏՕ-ն: Մի կողմից, պետք է ենթադրել, որ թուլացել էր ռազմական վտանգը, մյուս կողմից՝ որ անվտանգության մարտահրավերները փոխել էին իրենց ուղղությունները: Վրաստան-Ուկրաինա-Ադրբեջան-Մոլդովա միությունը միանգամից երկու նոր խնդիր դրեց իր առաջ՝ նավթ եւ ժողովրդավարություն:

Միջազգային կազմակերպություններում ՀՀ և Ուկրաինայի համագործակցությունն ակնկալում է տարբեր կազմակերպությունների մարմիններում ներկայացված միմյանց թեկնածուներին աջակցություն ցուցաբերելը, ինչպես նաև ՄԱԿ-ի համակարգում ներկայացվող փոխադարձ կարևորություն ունեցող բանաձևերի քվեարկությունների ժամանակ բարենպաստ դիրքորոշում արտահայտելը: Ուկրաինան սկսած 1996 թվականից, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում կողմ է քվեարկում ՄԱԿ-ի համակարգում ՀՀ-ին ուղղակիորեն առնչվող «Համագործակցություն ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի միջև» բանաձևի ադրբեջանական լրացմանը՝ քվեարկության ժամանակ ունենալով «ծեռնպահ» քվեարկելու կամ քվեարկությանը չմասնակցելու այլընտրանք (ինչը և նրանից խնդրում է հայկական կողմը): 2004թ. հոկտեմբերին Ուկրաինան, ի թիվս 42 այլ երկրների կողմ է քվեարկել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի օրակարգում Ադրբեջանի կողմից առաջադրված՝ «Իրադրությունը Ադրբեջանի գրավյալ տարածքներում» վերնագրված նոր կետ ընդգրկելու առաջարկին: ՀՀ մշտապես արտահայտել է իր պատրաստակամությունը միջազգային կառույցներում երկկողմ համագործակցության մակարդակը բարձրացնելու հարցում: Դրա հետ մեկտեղ նշենք, որ Ուկրաինան աջակցել է ՀՀ-ի ԵՏ անդամագրվելու հարցում, երկու երկրների դիրքորոշումները լիովին համընկնում են ԱՊՀ շրջանակներում տնտեսական համագործակցության զարգացման, մասնավորապես, ազատ

---

[13] Տե՛ս ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, ց.8, գործ 237, էջ 31:

առևտրի գոտու ստեղծման հարցում, ինչպես նաև հաջողությամբ համագործակցում են ՍԾՏՀԿ շրջանակներում[14]:

Ասել կուզի, որ Ղարաբաղյան հակամարտության և ընդհանրապես միջազգային նշանակության այլ հարցերում Ուկրաինան Ադրբեջանի դաշնակիցն է: Դա նշանակում է նաև, որ Հայաստան-Ուկրաինա միջպետական հարաբերություններում մեր դիվանագիտական կորպուսը ակտիվություն չի դրսևորել, ինչ վերաբերում է երկկողմ ռազմական համագործակցությանը, ապա նշենք, որ Ուկրաինայի և ՀՀ պաշտպանության այն ժամանակվա նախարարներ Եվգենի Մարչուկը և Սերժ Սարգսյանը Կիևում 2004թ.-ին ստորագրել էին երկու երկրների ռազմական գերատեսչությունների համագործակցության մասին մի փաստաթուղթ, որը մասնավորապես նախատեսում էր համատեղ խորհրդատվությունների անցկացում ու մշտական երկխոսության պահպանում տարածաշրջանային անվտանգության հարցերի և «թեժ կետերի» իրավիճակի շուրջ:[15]

Երկու երկրները բավականին արդյունավետ ձևով համագործակցում են միջազգային կառույցներում, որպես օրինակ՝ հիշեցնենք Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի 2002թ. նստաշրջանը, որտեղ ընդունվել էր ՀՀ համար նպաստավոր որոշում՝ նաև Ուկրաինայի պատվիրակների աջակցությամբ:[16]

Հայ-ուկրաինական երկկողմ հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա: Երկու երկրները, ինչպես նշեցինք, հաջողությամբ համագործակցում են նաև միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ ԱՊՀ, ՍԾՏՀ, Եվրոխորհրդի շրջանակներում: Երկկողմ հարաբերություններում գոյություն ունեցող բազում խնդիրներ իրենց լուծումն են գտնում այդ կառույցների շրջանակում ընթացող երկկողմ համագործակցության արդյունքում: ՀՀ և Ուկրաինան իրենց փոխհարաբերություններում առաջնորդվում են ելնելով առաջին հերթին իրենց ազգային շահերից և փորձում են զուգակցել դա ժամանակի պահանջներին:

---

[14] Տես ՀՀ ԱԳՆ Պատմաղիվանագիտական բաժին, գ.11, գործ 142, էջ 3-4:

[15] Տես Արմենպրես, հաղորդագրություն, Հայաստանի և Ուկրաինայի ռազմական գերատեսչությունները 2004թ. համագործակցության պլան են ստորագրել, «Հայաստանի Հանրապետություն», 2003, № 190, հոկտեմբերի 10, էջ 1, ITAR-TASS News Agency, report, Armenia interested in purchasing hardware, ammunition in Ukraine, 2003, October 7, UNIAN, report, Ukraine, Armenia signed 2004 military cooperation plan, 2003, October 8.

[16] Ուքրանիոյ նախագահ Լ.Քուչմա Հայաստանի մէջ, տես »Ազատ օր» 2002, հոկտեմբերի 10, № 17399, էջ 1,ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ ԱՊՀ վարչություն, հայ-ուկրաինական հարաբերությունների վերաբերյալ տեղեկանք, 2002, էջ 1-2:

Բնականաբար, Ուկրաինա-Ադրբեջան հարաբերությունների ջերմ գործնական դրսևորումները միջազգային դիվանագիտության կողմից անգամ նկատվում էին որպես անդրկովկասյան տարածաշրջանում՝ Ուկրաինայի փորձ ի հակակշիռ ՌԴ-ի ամրապնդելու իր դիրքերը: Եվ եթե Անդրկովկասում ՀՀ-ն է ավանդաբար դիտվել է իբրև ՌԴ ռազմավարական գործընկեր, ապա Ադրբեջան-Ուկրաինա սերտացող հարաբերություններից պետք է եզրակացնել, որ մեր տարածաշրջանում ստեղծվում էր նոր դաշինք՝ Բաքու-Կիև տիրույթում՝ առարկայանալով ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական համագործակցություններում: Չնայած այս ամենին նշենք, որ այսօր Հայաստանի Հանրապետության շահերից ևս բխում է Ուկրաինայի հետ ավանդական բարեկամական հարաբերությունների պահպանումն ու նրանց կատարելագործումը: Ուստի կարելի է փաստել, որ այդ երկրի հետ հարաբերությունները շարունակվում են համարվել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղղություններից:

In the aftermath of the collapse of the Soviet Union and the proclamation of independence, both countries faced the need to cooperate in diverse programs, since it could serve as an additional stimulus for Ukraine and Armenia on the way to establish friendly and partnering relations. However, there are a number of differences in the concepts of foreign policies and military security policies adopted by the two countries.

It may be inferred that the first round of the establishment of Armenian-Ukrainian official relations was quite active and fruitful. It was then that the grounds for future practical endeavors were laid. It is worth mentioning, that Ukraine serves, in fact, as a bridge for Armenia with the external world, and with Europe, in particular. The latter is of immense significance for the Republic of Armenia.The role of Ukraine as one of the former USSR countries cannot be overestimated, either (after Russia, of course). Such relations serve as favorable preconditions for further development of relations in diverse spheres.

Currently Armenia enjoys high-level relations with Ukraine, and it is equally important for the development of mutually beneficial cooperation in various fields and for the enhancement of the best long-term strategic interests of Armenia and Ukraine. Armenia's relations with Ukraine are of strategic importance, even though there is almost no practical military cooperation between the two countries.

Ukraine has stated and not once that it favors the Nagorno Karabakh conflict settlement based on the principle of the territorial integrity, international laws and norms and that Ukraine will welcome any solution that is equally and mutually acceptable for parties to the conflict. The chances of Armenia's beneficial participation in different programms of regional cooperation have been restricted as a result of the doctrines of the countries sharing common interests in them. The key problem of Armenia's full involvement in regional cooperation programs is manifested in the development processes of GUUAM (Georgia-Ukraine-Uzbekistan-Azerbaijan-Moldova) where Ukraine is a key participant.

Unlike numerous assurances presented by Kiev, the Armenian side is still concerned about the deepening of Ukrainian-Azerbaijani relations that display somewhat strategic features (the Ukrainian side has been informed about it on a number of occasions and at various levels) and the de facto support of Ukraine to anti-Armenian resolutions and programmes in international bodies.